



լսարանի վարժապետն ալ կ'ընդունի պատմագիրներու վկայութիւնը՝ որոնց համեմատ Արշակունի տոհմը Ափրազատ Գ-ին չորս զաւակներով և անոնց սերունդով շարունակեց իր զոյւթիւնը։ Այս չորս զաւակները եղան նորէն տարածուող Արշակունի տան նախնիքները. իրենց սերունդները անթիւ ճիւղաւորութիւններ ունեցան ու պահէցին իրենք զիրենք ազնուականութեան բարձրութեան վրայ։ Առաջին տղան էր Արտաշէս, որմէ թագաւորական գիծը կը մեկնէր, և որ վերջէն գահը կորսնցուց. երկրորդէն՝ Խորէն Պաշլուաին՝ արու զաւակ մը յաջորդեց. երրորդ տղան Սուրէն Պաշլուա խոնարհեցաւ Սասանեան իշխանութեան առջեւ. իսկ չորրորդը՝ աղջիկ զաւակ մ'էր Կոսմանուով։ Ասոր ամուսինը եղաւ Ասպահապետ Պաշլուա, որմէ նոյնպէս բազմաթիւ յաջորդութիւններ սերեցան։ Սուրէնէն ու Կոսմ-իզական ճիւղէն ծագող Արշակունի տան քանի մը անդամները վարեր են բարձր պաշտօններ ալ. ասոնցմէ մեկնեցան նոյնպէս բազմաթիւ ընտանիքներ՝ բոլորովին տարբեր մականուն կրող, ինչպէս օր. Միր (Միթրա) ընտանիքը. որ նոյնպէս բարձր պաշտօններ վարեր էր Սասանեաններու ժամանակ, անոնց յօժարակամ հպատակելուն համար։ Ասոնց կալուածները Թաւրիգի մօտն էին, ուր երկար ժամանակ կ'իշխէին իրրեւ գրեթէ միահեծան տէրեր ու զարերու ընթացքին արարներու զէմ կոիւններ մղած են։ Արշակունեան այս սերունդէն բազմաթիւ երկրորդական ճիւղեր ընձիւղեցան. այսպէս օր. Սասանեաններէն քանի մ'անգամ բնաջինջ ըլլալու դատապարտուած՝ վերոյիշեալ երկրորդ զաւակէն՝ Խորէն Պաշլուաին ալ կը մեկնէր ճիւղ մը՝ որ ապա շատ ծառաւեցաւ. այսինքն՝ Խորէն Պաշլուաի բարեզամութէն, որմէ կը սերի նաեւ հայկական Կամսարական նախարարական տունը. ինչպէս պատմագէտներն ալ կ'ընդունին։

Յայտնի է ուրեմն որ Արշակունիները

գահը կորսնցնելէն ետքն ալ աներեւոյթ չեն եղած պամութեան ընտէն, մանաւանդ թէ բազմաթիւ Պարսիկ ու հայ ընտանիքներու նախնիքներ եղած են, որոնք բնականաբար զարերու ընթացքին ու քաղաքական դէպքերու բերումով գիրքերնին ու աւանդութիւններն կորսնցուցած են։ Այս սերունդներու մէջ, որոնք Արեւելեան սովորութեան համեմատ ընդհանրապէս նիւթական հարստութեան գիծով կը պահէին իրենց պատմական իշխանական սերունդը, ճիշտ այս արիւնոտ զարերուն սնանկացած ու հալածանքներու հետեւանքով փճացած՝ կորսնցուցած են նաեւ ազնուական տոհմէ սերած ըլլալու գիտակցութիւնն ալ։ Ինչ ինչ պարագաներու մէջ սակայն՝ ուր անհատներու կրթութիւնը նպաստած էր՝ շատ վերջը յաջորդող զարերու մէջն ալ գեռ կենդանի մնացած է ազնուականութենէ սերած ըլլալու աւանդութիւնը։ Ասոնք հիմնուած են բնականաբար տեղական պատմագիրներու, ընտանեկան վաւերաթուղթերու, ու շատ անգամ ալ բերանացի աւանդութեան վրայ։ Արեւելքի մէջ այսօր իսկ չենք կրնար խօսիլ եւրոպական իմաստով առնուած գիւտներու և ընտանեկան պատմութեան գիտութեան մասին։

Այսպէս կարելի է բացատրել միջին դարուն յաջորդող առաջին զարերուն երբեմն երեւցող պայազատութիւնները. որոնք ոչ միայն իրենց հայրենակիցներէ՝ այլ նաեւ օտարներէ ալ իրր թագաւորական տոհմի պատկանողներ կը յիշատակուին։ Այսպէս օր. Ապետիքէն ալ առաջ Հոռմ եկող Արգարը՝ իրր Արգարեան հարստութենէն սերող մը կը խաղայ նոյն ժամանակուան վաւերաթուղթերուն մէջ (տես 2. Ն. Ա. Կիրեանի հաւաքածոները, Վիեննա)։

Յայտնի է ուրեմն որ անկարելութեան օրէնքը կարելի չէ բանեցնել Ապետիքի Արշակունեան պայազատութեան մասին։ Որովհետեւ կը տեսնենք որ իր գահազրկուութենէն վերջն ալ միջին դարուն և անոր

յաջորդող զարերուն գոյութիւն ունի Արշակունեան տոհմը զանազան անուններու տակ։ Միւս կողմէն սակայն բացորոշ հաստատել Ապետիքի տոհմային հարցը - այսքան սակաւաթիւ տուեալներով - կարելի չէ։ Պետրոս Ապետիք պատանեկութեան ժամանակ՝ փախուստի միջոց, որուն պարագաները յետոյ պիտի տեսնենք, բնականաբար չէր կրնար հետը բերել իր վաւերաթուղթերը, եթէ անոնք իրապէս գոյութիւն ալ ունեցած ըլլային։ Սակայն իր ազնուական ու վաղեմի ընտանիքէ մը սերելը (իր կան ու վաղեմի ընտանիքէ մը սերելը) - ժամանակակիցները, ճամբորդները ու ազգամանակակիցները, ճամբորդները մէջ գակիցները կը յիշեն իրենց գործերուն մէջ Ապետիքի չորրորդ նախնիքը և բազմաթիւ ազգականները) կը տեսնուի նաեւ Ֆրանսուա Փիքէի (François Picquet) գործէն ալ, որ զինքը ազատեր էր մանկութեան ժամանակ, և որ բնականաբար ո՛ր և է մէկու մը համար ինքզինքը վտանգի պիտի չենթարկէր, և որ միշտ պարծանքով կը յիշէ անոր վաղեմի ազնուականութիւնը իր մեծերու ու ազգակիցներու առջեւ. մանաւանդ եթէ կարելի է կարեւորութիւն մ'ընծայել նաեւ անոր զինանշանի խորհրդանշաններուն, անոր կրթութեան, Հոռմի կեանքի սկիզբին ու Վիեննայի արքունիքի մէջ ունեցած գերին, որոնք բոլորն ալ իրենց մանր մունր պարծանքներով կը վկայեն Ապետիքի բարի բազաներով կը վկայեն Ապետիքի բարի հաւատքի մասին՝ թէ ինքը իրապէս ընտանեկան աւանդութեան մը վրայ հիմնուած կը կարծէր ինքզինքը Արշակունեան սերունդէ, մինչեւ իսկ Վիեննայի նախնածո բունդէ, որ քննադատ արքունական շրջանակին մէջ, ու քննադատ արքունական շրջանակին մէջ Միւս կողմէն եթէ շատերէն յարգուած այս

մարդը, և ինչպէս իր գործերէն ու գրութիւններէն կը տեսնուի՝ պատուաւոր, բարեհաւատ, խորապէս կրօնական ու կաթոլիկէ մարդը՝ իր կոմսութեան վկայականի մէջ անհիմարէն հաստատէր իր ազնուատոհմութիւնը՝ ապահովապէս իր թշնամիները գէմը կ'ելլէին, ու վկայականը պիտի չհասնէր Լէոփոտի առջեւ ստորագրուելու համար, արդէն այն ատենէն իսկ աչքի զարնող ու քննութեան ենթարկուած թագաւորական ծագումը կեղծելուն համար։ Եթէ ապրէին կամ ոչ Պարսկաստանի մէջ Արշակունիները, ամէն պարագայի մէջ հետաքրքրական ու յատկանշական է այդ արեւելեան ընտանեկան աւանդութիւնը, որ այդքան ժամանակներէ վերջն ալ գեռ վառ ու կենդանի կը պահէր Ապետիքի մէջ Արշակունիի գիտակցութիւն մը։ Առարկայական ըլլալու համար սակայն պէտք է ըսենք որ Արքայական Մատեանէն փոխ առնուած Հունգարական Գիւտնադպրութեան գեղոյցին մէջ ոչ մէկ վաւերաթուղթ կը վկայէ ասոր մասին։ Այս Արշակունեան ծագումը փնտռելու է Ապետիքէն յօրինուած խնդրագրին մէջ՝ որ նոյնպէս, զժրախտաբար, անգտանելի է։ Թերեւս ասոր ակնարկեն նոյնպէս գեռ ուրիշ յիշատակութիւններ ալ իր ծագման մասին իր տպագրուած գործերուն մէջ։ Սակայն ինչպէս ալ վերջնայ այս հարցին քննութիւնը՝ էական փոփոխութիւն մը չի կրնար բերել Ապետիքի գործունէութեան ու կենսագրութեան ծանօթութեան մասին։

Հ. ԱՆԴՐԷԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

